[illegible]

375
Ա-57

06 APR 2010

375:378(47.92)
Գ-57

# ՊՐՈՍՊԵԿՏ

## ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՀԵՌԱԿԱ ՖԻՆ. ՏՆՏԵՍԱԳԻ-ՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ

1933 ԹՎԻ ՈՒՍ. ՏԱՐՎԱ

13 FEB 2013
53.648
375:3...(47.92)
Ա-57
36173

## ՍԻՐԵԼԻ ԸՆԿԵՐՆԵՐ,

«Թեորիան, յեթե դա իսկական թեորիա յե, պրակտիկներին կողմնորոշման ուժ ե տալիս, հեռանկարի պարզություն, աշխատանքի վստահություն և հավատք, վոր մեր գործը հաղթանակելու յե»:

ՍՏԱԼԻՆ

Մեր սոցիալիստական շինարարության նոր շրջանը, տնտեսական նոր կացությունը և աշխատանքի նոր պայմանները անդասակարգ հասարակության կառուցողների՝ բանվոր դասակարգի, կոլխոզնիկների և բոլոր աշխատավորների առաջ դնում են խնդիր՝ տիրապետել իրենց գործի տեսականն ու գործնականը, ինչպես նաև տիրապետել սոց շինարարության ֆրոնտի հետագա պայքարի ըմբռնումն ըստ Մարքս-Լենինյան մեթոդոլոգիայի:

Կադրերի խնդիրը ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի համար հանդիսանում ե ժողովրդատնտեսության կարևորագույն պրոբլեմներից մեկը:

Անդասակարգ հասարակության կառուցման ժամանակաընթացքում, ֆինանսավարկային սիստեմի վրա դրված խոշորագույն խնդիրների հաջող և ժամանակին կատարումը, այն ե, ապահովել սոցշինարարությունը ֆինանսական միջոցներով, միասնական ֆինպլանի իրացումով, նոր միջոցների կուտակման ընդարձակումով, տնտհաշվարկի արմատացումով և վողջ ժողովրդական տնտեսությունը ռուբլով կոնտրոլի յենթարկելը զգալի չափով կախված ե ֆինկադրերի պրոբլեմի արմատական և ճիշտ լուծումից, ֆինանսավարկային սիստեմը մասնագետներով ապահովելուց, այնպիսի մասնագետներով, վորոնք տիրապետեն տնտեսական և հատուկ տեխնիկական խորացված գիտելիքների, լայն տնտեսա-



Սրբագրեցին՝ Հ. Սաակյան, Ե. Հարությունյան

Պատվ. 3081   Գլավլիտ 8976(բ),   Տիրաժ 800

Պետհրատի տպարան

հասարակական աշխարհայացքով մասնագետներ, որոնք նվիրված լինեն սոցիալիստական շինարարության գործին:

Ֆինանսական տեխնիկայի տիրապետումը սոցշինարարության տվյալ ժամանակաշրջանում, ֆինանսավարկային աշխատողների համար պետք է հանդիսանա հիմնական խնդիրներից մեկը:

Ի նկատի ունենալով այն, որ գոյություն ունեցող ստացիոնար ֆին-տնտեսական բուհերը և տեխնիկումները ի վիճակի չեն մոտ ապագայում լուծել ֆին-վարկային կադրերի խնդիրը, որոնց կարիքը չափազանց մեծ է, ուստի ուսուցման ստացիոնար ձևերի հետ միաժամանակ բացառիկ նշանակություն է ձեռք բերում հեռակա ուսուցման սիստեմը, որպես լավագույն միջոց աշխատողներին պատրաստելու և վերապատրաստելու՝ առանց կտրելու վերջիններին արտադրությունից:

Մտնելով իր գոյության յերկրորդ տարին՝ Անդր. Հեռ. Ֆին. Ինստիտուտը (որն ունի 4 սեկտոր՝ վրացական, թուրքական, հայկական և ռուսական) հիմնական խնդիր է դնում իր առաջ — ընդգրկել հեռակա ֆին-տնտեսագիտական Ինստիտուտի ցանցի մեջ Անդրֆեդերացիայի աշխատավորական լայն մասսաները, առաջին հերթին բանվորներին, կոլխոզնիկներին, և ֆին-վարկային ապարատի աշխատողներին, որպեսզի նրանցից յուրաքանչյուրը չկտրվելով իր գործնական աշխատանքներից, կարողանա ստանալ հատուկ միջնակարգ, բարձրագույն ֆին-տնտեսագիտական կրթություն, կարողանա տիրապետել Մարքս-Լենինյան տեսությանը:

Ինստիտուտի դիրեկցիան առաջադրելով Հեռ. Ֆին. Տնտեսագիտական Ինստիտուտի ընթացիկ ընդունելության ժամանակը հետևյալ նշանաբանով՝ «Յուրաքանչյուր ֆին-վարկային աշխատող, որը չունի բարձրագույն կամ միջնակարգ կրթություն, պարտավոր է դառնալ Հեռ. ֆին-տնտեսագիտական Ինստիտուտի կամ Տեխնիկումի ուսանող» — դիմում է տեղական բոլոր ֆին-վարկային մարմիններին, բոլոր ֆին-վարկային աշխատողներին, ինչպես նաև բոլոր աշխատավորներին, որոնք ցանկանում են տիրապետել Մարքս-Լենինյան ֆինանսատնտեսագիտական տեսությանը, տանել լայն բացատրական աշխատանք հեռակա ֆինանսատնտեսագի-



տական կրթության գաղափարների շուրջը, աշխատելով միաժամանակ ընդգրկել հեռակա Ինստիտուտի և Տեխնիկումի ցանցի մեջ ֆին-վարկային աշխատողների բանակը:

Տեղական ֆին-վարկային մարմինները պարտավոր են ցուցաբերել բոլոր հնարավոր միջոցները՝ օգնելու 100%-ով ընդգրկել, ընթացիկ ընդունելությունների ժամանակ, ֆին-վարկային աշխատողներին, որոնք կարիք են զգում իրենց որակը բարձրացնելու, վերաբերվել ամենալուրջ կերպով հեռակա ուսանողների աշխատանքներին, ապահովել վերջիններին՝ պարապմունքները կազմակերպելու համար անհրաժեշտ պայմանները, ցույց տալ Ինստիտուտին աջակցություն՝ խմբակներ կազմակերպելու պրակտիկան անցկացնելու և այլն գործերում:

Միայն և միայն հեռակայինների ակտիվ աշխատանքների, ֆին-վարկային մարմինների օգնությամբ Ինստիտուտի յեղած փորձի միջոցով մենք կարող ենք տալ յերկրին սոցիալիստական շինարարության նվիրված նոր մասնագետների ամբողջ բանակ:

ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԴԻՐԵԿՑԻԱ.

## Անդրկովկասյան Հեռակա ֆինանսա-տնտեսագիտական Ինստիտուտի և Տեխնիկումի ընդունելության պայմանները

1. Անդրհեռակա Ֆին. ինստիտուտն ընդունվում են այն քաղաքացիները, առանց սեռի խտրության, վորոնք ձայնազուրկ չեն և ապրում են աշխատավորական յեկամուտով:

Ծանոթություն.— Ինստիտուտ ընդունվելու համար դիմողը պետք է ունենա 18-ից մինչև 35 տարեկան հասակ, իսկ Տեխնիկումում՝ 16-ից 30 տարեկան:

2. Թե Ինստիտուտ և թե Տեխնիկում առաջին հերթին ընդունվում են արտադրության բանվորները, կոլխոզնիկները, կարմիր բանակայինները և կարմիր պարտիզանները: Յերկրորդ հերթին՝ ֆին-վարկային ապարատում աշխատողները, վորոնք բավարարում են ընդունելության ընդհանուր պայմաններին. և յերրորդ հերթին՝ սահմանափակ քանակությամբ մնացած աշխատողները և ժողովրդական տնտեսության այլ ճյուղերում աշխատողները, վորոնք բավարարում են ընդունելության ընդհանուր պայմաններին:

3. Ինստիտուտ ընդունվում են այն անձինք, վորոնք ավարտել են բանֆակներ, տեխնիկումներ, տասնամյակներ և այլ միջնակարգ դպրոցական հիմնարկներ, վորոնք տալիս են իրավունք բարձրագույն դպրոցներ ընդունվելու համար:

Ծանոթություն.—Նրանք, ովքեր ունեն յերկար պրակտիկայի ստաժ (յերեք տարուց վոչ պակաս պատասխանատու-ոպերատիվ աշխատանքի), վորպես բացառություն կարող են ընդունվել Ինստիտուտ յոթնամյա կրթությամբ:

4. Տեխնիկում ընդունվում են նրանք, ովքեր ունեն յոթնամյա կրթություն:



5. Ընդունելության անկետաների դիմումները պետք է լրացվեն, բացառապես սրան կցված հատուկ ձևերով:

6. Թե Ինստիտուտում և թե Տեխնիկումում ընդունելությունը կատարվում է և հիմնարկների գործուղումներով, նույնպես և անհատական դիմումներով, ընդվորում՝ յերկու դեպքումն էլ, նպատակ ունենալով ապահովել Ինստիտուտը և Տեխնիկումը հասարակականապես և քաղաքականապես պատրաստված ուսանողների կոնտինգենտով (կադրով), ընդունելությունը կատարվում է վարչությունների, ձեռնարկների և հիմնարկների կուս. ու պրոֆ. կազմակերպությունների յերաշխավորագրերի հիման վրա:

Ծանոթություն.— Նրանք, ովքեր ապրում են վորևէ մեկի խնամքի տակ, ընդունվում են այն կուս. և պրոֆ. կազմակերպությունների յերաշխավորագրերի հիման վրա, վորտեղ աշխատում է իրենց խնամողը: Այդ դեպքում նախապատվության իրավունքը տրվում է բանվորների, կոլխոզնիկների, կարմիր բանակայինների, գիտական աշխատողների, լուսաշխատողների ֆին-վարկային աշխատողների յերեխաներին:

7. Քննության չեն առնվի այն դիմումները, վորոնց չի կցված գործուղումը կամ յերաշխավորագիրը:

8. Դիմումի մեջ պետք է անպայման հիշատակված լինի, թե վոր սեկտորում և բաժնում ցանկանում է սովորել դիմողը:

9. Դիմումների և անկետաների հետ միասին, վորոնք պետք է լրացված և վավերացված լինեն համապատասխան կերպով, անհրաժեշտ է կցել կրթության փաստաթղթերը և յերկու հատ լուսանկար:

10. Դիմումները տրվում են համապատասխան ՎՍԽՀ, ՀՍԽՀ, ԱՍԽՀ Ֆինժողկոմատների ընտրող հանձնաժողովներին կամ Հանրապետական Կոնսուլտացիոն Բյուրոներին կամ էլ անմիջապես Ինստիտուտին:

Ադրբեջանում ապրողները դիմումներն ուղղում են հետևյալ հասցեյով.

1) Բաքու՝ ԱՍԽՀ Ֆինժողկոմատ Կադրերի սեկտոր կամ

2) Բաքու՝ Կրասնոարմեյսկայա փողոց № 29, ԱնդրՀեռՖինԻնստիտուտի Ադրբեջանի Կոնսուլտացիոն Բյուրո:

Հայաստանում ապրողները՝ Երևան ՀՍԽՀ Ֆինժողկոմատ ԱնդրՀեռՖինԻնստիտուտի Կոնսուլտացիոն Բյուրո:

Վրաստանում ապրողները՝ Թիֆլիս Դժուղաշվիլի փողոց № 4 ԱնդրՀեռՖինԻնստիտուտին:

11. Ֆինժողկոմատներին կից ընտրող հանձնաժողովներն ինչպես նաև Կոնսուլտացիոն բյուրոները և հենակետերը բոլոր դիմումներն իրենց յեզրակացություններով և միջնորդություններով ընդունելության մասին ուղարկում են Անդրկովկասյան Հեռակա Ֆին. Ինստիտուտի կենտրոնական ընդունող հանձնաժողովին:

12. Ընդունելությունը կատարում է կենտրոնական ընդունող հանձնաժողովը:

13. Ընդունելությունը կատարվում է վրացական, թուրքական, հայկական և ռուսական սեկտորներում— ընդունվողի ցանկության համաձայն:

14. Ուսման տարեկան վարձը սահմանվում է հետևյալ չափով՝

Ինստիտուտում

Նրանք, ովքեր ստանում են աշխատավարձ ամսական մինչև 100 ռ., ուսման վարձը տարեկան վճարում են 60 ռ., 100-ից մինչև 200 ռ. ստացողները վճարում են տարեկան 120 ռուբլի, 200-ից բարձր ստացողները՝ 150 ռուբլի:

Տեխնիկումում

Ամսական մինչև 100 ռ. աշխատավարձ ստացողները, տարեկան վճարում են ուսման վարձ 40 ռուբլի, 100-ից մինչև 200 ռ. ստացողները՝—70 ռուբլի, 200-ից բարձր ստացողները՝ 100 ռ.:

15. Դիմում տալու ժամանակ Ինստիտուտի ընթացիկ հաշվին փոխանցվում է 5 ռուբլի մուտքի վճար:

16. Ընդունելության մասին տեղեկություն ստանալուց հետո, ուսանողներն ուսման վարձը մուծում են ըստ կվարտալների՝ հավասար չափով:

17. Դիմումների ընդունելությունը կատարվում է 1932 թ. սեպտեմբերի 25-ից մինչև հոկտեմբերի 25-ը:



## Անդրկովկասյան հեռակա ֆինանսական տնտեսագիտական ինստիտուտ
## (ԱնդրՀեռՖինԻնստիտուտ)

Ընդունված է. Արձանագրության № ______

Չի ընդունված ______

______

Հաշվառման քարտ № ______

Ուսանողական տոմսը դուրս է գրված ______

Սկսված է վճարակտրական քարտ ______

______

Ընդունող հանձնաժողովի քարտուղար ______

(Այս տեղեկանքը լրացվում է ԱնդրՀեռՖինԻնստիտուտի կողմից)

---

## Անդրկովկասյան հեռակա ֆինանսատնտեսագիտական ինստիտուտին
## ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ ընդունել ինձ վորպես ուսանող

Ինստիտուտի ______

______ բաժին

Պարտավորվում եմ կատարել Ինստիտուտի բոլոր պահանջները և սահմանված ժամկետներին կանոնավոր կերպով մուծել ուսման վարձը:

Տեխնիկումի ______

______ բաժին

Պարտավորվում եմ կատարել Տեխնիկումի բոլոր պահանջները և սահմանված ժամկետներին կանոնավոր կերպով մուծել ուսման վարձը:

Սկզբնական հասանելիք մուտքը ______ ռ. ______ կ. գումարը փոխադրված է «______» ______ ամսի 193 թ. (ցույց տալ ինչ յեղանակով

______

Ամբողջ գրագրությունները և դասախոսական նյութերը խնդրում եմ ուղարկել հետևյալ հասցեով ______

(դիմողի լրիվ հասցեն)

---

## Ընդունվողի անկետա

1) Ազգանուն, անուն, հայրանուն ______

2) Սեռ ______ 3) Ազգություն ______ 4) Պրոֆեսիա ______

5) Ընտանյան թիվը ______ 6) Վոր միության անդամ է ______

______ միության ստաժը ______ տոմսի համար

7) Ինչ աշխատանք է տարել, վոր ժամանակից և մինչև յերբ. վորտեղ, վոր արտադրությունում կամ հիմնարկում է աշխատել ___

8) Կրթություն ___

Բարձրագույն
Միջնակարգ
Տարրական
Մասնագիտական
(ընդգծել)

Ցույց տալ վոր ուսումնական հիմնարկումն է սովորել, ավարտել է թե վոչ յերբ և վորտեղ.

9) Կուսակցականությունը այժմ Համ. Կ(բ)Կ. Համ. ԼԿՅԵՄ անդամ կամ թեկնածու ___

Յերբվանից ___

Տոմսի № ___

10) Յեղե՞լ է անդամակցել քաղաքական կուսակցության մեջ թե վոչ. մասնանշել անունը ___

11) Ծնողների սոցիալական ծագումը ա) բանվոր, բ) գյուղացի, բատրակ, միջակ, կուլակ, չքավոր, կոլտնտեսական. գ) ծառայող, դ) տնայնագործ. ե) առևտրական, զ) ազնվական (ընդգծել).

12) Անկետան լրացնողի սոց. դրությունը ___

13) Վոր ձեռնարկում կամ հիմնարկում է աշխատում.

___

Հասցեն՝ ___

14) Ամսական աշխատավարձի չափը ___

Ամիս, թիվ տարի ___

Ստորագրություն ___

Տեղեկությունների ճշտությունը ներկայացված փաստաթղթերի համեմատ և ընկեր ___ անձնական ստորագրությունը հաստատում եմ

Պաշտոնական անձի ստորագրությունը վորը վավերացնում է սույն տեղեկությունները՝

Կնիքի տեղ

Սխալ տեղեկություններ տալու դեպքում այն անձինք, վորոնք լրացնում են անկետան, յենթարկվում են պատասխանատվության.



Յերաշխավորության համար

Յերաշխավորների համար.

Ընկ. ___ գործուղվում է ___

___

(գործուղող կազմակերպության լրիվ անվանումը)

Ինստիտուտի ___ կուրսը ընդունվելու համար ___

Տեխնիկումի ___

Գործուղվողի հառաջադիմության մասին խնդրվում է տեղեկացնել հետևյալ հասցեով ___

Վարչություն՝

Կնիքի տեղ

Ստորագրություններ կուս. կամ պրոֆ. կազմակերպության ___

Բանվորների յեվ ծառայողների անհատական ընդունելության համար

___

(Ձեռնարկի կամ հիմնարկի անունը)

___

Պաշտպանում է նրա դիմումը Ինստիտ. / Տեխնիկ. ընդունվելու համար։

Վարչության ստորագրություն

Կնիքի տեղ

Կուս. կամ պրոֆ. կազմակերպության կողմից տրված համառոտ բնութագիրը ___

___

Ստորագրություն ___

Կնիքի տեղ

Անդրկովկասյան Հեռակա ֆինանս-տնտեսական ինստիտուտի (Անդրհեռֆինինստիտուտի)՝ ուսումնական ծրագիրը

Ինստիտուտն ունի չորս ֆակուլտետ՝ ֆինանսական, վարկային և հաշվե-տնտեսագիտական։ Բոլոր ֆակուլտետների ընդհանուր առարկաներն են.

1) Քաղաքատնտեսություն, 2) Դիամատ, 3) Տնտեսական աշ-

խարհագրություն 4) ԱՄՑԽՀ-ի տնտեսական աշխարհագրություն, 5) Խորհրդային տնտեսության տեսությունը, 6) Լենինիզմ, 7) Տնտեսական իրավունք, 8) Ընդհանուր վիճակագրություն, 9) Հաշվեկշռի հաշվառման հիմունքները, 10) Մաթեմատիկա:

## Ֆինանսական ֆակուլտետի մասնագիտական առարկաները ըստ բաժինների

### Ֆինանսական բաժին.

(Պրոֆիլը—տնտեսագետ-ֆինանսիստ)

1. Կապիտալիստական երկրների ֆինանսները
2. ԽՍՀՄ-ի ֆինանսները
3. Կապիտալիստական երկրների—դրամ, վարկ
4. ԽՍՀՄ-ի—դրամ, վարկ
5. Արդյունաբերության, գյուղատնտեսության, առևտրի և տրանսպորտի տնտեսագիտությունն ու ֆինանսները:
6. Ֆինպլանի կազմելու և կատարման տեխնիկան
7. Շրջանի ֆինանսները և տնտեսությունը
8. Պլանի և հաշվեկշռի վերլուծումը
9. Վարկային պլանի կազմումը և կատարումը
10. Արդյունաբերական և գյուղատնտեսական վիճակագրությունը.
11. Արդյունաբերական և գյուղատնտեսական ձեռնարկների հաշվառում:

### 2. ԽՆԱՅԴՐԱՄԱՐԿՂԻ ՅԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՎԱՐԿԻ ԲԱԺԻՆ

(Պրոֆիլը՝ Պետ. վարկի և խնայգործի տնտեսագետ)

1. Կապիտալիստական երկրների ֆինանսները
2. ԽՍՀՄ-ի ֆինանսները
3. Կապիտալիստական երկրների—դրամ և վարկ
4. ԽՍՀՄ-ի—դրամ և վարկ



5. Պետվարկ և խնայողական գործ
6. Գործառնական տեխնիկա և հաշվառում
7. Շրջանի տնտեսությունը և ֆինանսները
8. Խնայողական գործի կառավարման և ռացիոնալիզացիայի հիմունքները
9. Վարկային պլանի կազմումը և կատարումը
10. Պլանի և հաշվեկշռի վերլուծումը
11. Արդյունաբերության, գյուղատնտեսության, առևտրի և տրանսպորտի տնտեսագիտությունը և ֆինանսները:

## ՎԱՐԿԱՅԻՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ ԸՍՏ ԲԱԺԻՆՆԵՐԻ

### 1. Արդյունաբերության վարկավորման բաժին

(Պրոֆիլը—արդյունաբերության վարկավորող տնտեսագետ)

1. Կապիտալիստական երկրների ֆինանսները
2. ԽՍՀՄ-ի ֆինանսները
3. Կապիտալիստական երկրների դրամ և վարկ
4. ԽՍՀՄ-ի դրամ և վարկ
5. Արդյունաբերության վարկավորումը
6. Արդյունաբերության, գյուղատնտեսության, առևտրի և տրանսպորտի տնտեսագիտությունը և ֆինանսները:
7. Գործառնական տեխնիկան և հաշվառում
8. Պլանի և հաշվեկշռի վերլուծումը
9. Արդյունաբերական վիճակագրություն
10. Արդյունաբերական հաշվետվություն
11. Ֆինպլանի կազմումը և կատարումը:

### 2. Գյուղատնտեսության վարկավորման բաժին

(Պրոֆիլը—գյուղատնտեսությունը վարկավորող տնտեսագետ)

1. Կապիտալիստական երկրների ֆինանսները
2. ԽՍՀՄ-ի ֆինանսները

3. Կապիտալիստական յերկրների դրամ և վարկ
4. ԽՍՀՄ-ի դրամ և վարկ
5. Գյուղատնտեսության վարկավորումը
6. Գործառնական տեխնիկա և հաշվառում
7. Պլանի և հաշվեկշռի վերլուծումը
8. Հաշվեկշռի կազմումը և կատարումը
9. Գյուղատնտեսական վիճակագրություն
10. Գյուղատնտեսության հաշվետարություն
11. Արդյունաբերության, գյուղատնտեսության, առևտրի և տրանսպորտի տնտեսագիտությունն ու ֆինանսները:

3. Ապրանքաշրջանառության վարկավորման բաժին

(Պրոֆիլը—առևտուրը վարկավորող տնտեսագետ)
1. Կապիտալիստական յերկրների ֆինանսները
2. ԽՍՀՄ-ի ֆինանսները
3. Կապիտալիստական յերկրների դրամ և վարկ
4. ԽՍՀՄ-ի դրամ և վարկ
5. Արդյունաբերության, գյուղատնտեսության, առևտրի և տրանսպորտի տնտեսագիտությունը
6. Ապրանքաշրջանառության վարկավորումը
7. Գործառնական տեխնիկա և հաշվառում
8. Պլանի և հաշվեկշռի վերլուծումը
9. Առևտրական վիճակագրություն
10. Ֆինպլանի կազմումը և կատարումը:

## ՀԱՇՎԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԸՍՏ ԲԱԺԻՆՆԵՐԻ

### 1. Արդյունաբերական բաժին

(Պրոֆիլը—արդյունաբերության հաշվառման և պլանավորման տնտեսագետ)
1. Արդյունաբերական ձեռնարկների հաշվառում
2. Հաշվետվություն և պլանի վերլուծում



3. Արդֆինպլանի կազմումը և կատարումը
4. Արդյունաբերական ձեռնարկների կազմակերպում
5. Արդյունաբերության պլանավորումը և եկոնոմիկան
6. Արդյունաբերական վիճակագրություն
7. Արդյունաբերության վարկավորումը և ֆինանսավորումը
8. Մեքենայացված հաշվառում
9. Միասնական ֆինպլան և բյուջե:

### 2. Գյուղատնտեսական բաժին

(Պրոֆիլը—գյուղատնտեսության պլանավորման և հաշվառման տնտեսագետ)
1. Գյուղատնտեսության արտադրության հաշվառում
2. Հաշվետվություն և պլանի վերլուծում
3. Գյուղատնտեսական պլանի կազմումը և կատարումը
4. Գյուղատնտեսական ձեռնարկների կազմակերպում
5. Գյուղատնտեսության պլանավորումը և եկոնոմիկան
6. Գյուղատնտեսական վիճակագրություն
7. Գյուղատնտեսության վարկավորումը և ֆինանսավորումը
8. Միասնական ֆինպլանը և բյուջե
9. Մեքենայացված հաշվառում:

### 3. Առևտրա-կոոպերատիվ բաժին

(Պրոֆիլը—առևտրի պլանավորման և հաշվառման տնտեսագետ)
1. Առևտրա-կոոպերատիվ ձեռնարկների հաշվառում
2. Հաշվետվության և պլանի վերլուծում
3. Առևտրա-ֆինպլանի կազմում և կատարում
4. Առևտրա-կոոպերատիվ ձեռնարկների կազմակերպում
5. Առևտրա-կոոպերատիվ ձեռնարկների պլանավորումը և եկոնոմիկան
6. Առևտրա-կոոպերատիվ վիճակագրություն
7. Առևտրա-կոոպերատիվ հաշվետարություն

8· Առևտրա-կոոպերատիվ ձեռնարկների ֆինանսական վարկավորումը
9· Ֆինպլանը և բյուջե
10· Մեքենայացված հաշվառում:

## ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՀԵՌԱԿԱ ՖԻՆԱՆՍԱ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՏԵԽՆԻԿՈՒՄԻ (ԱՆԴՐՀԵՌՖԻՆՏՆՏԵՍԻՆՍՏԻՏՈՒՏ) ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Տեխնիկումն ունի երեք բաժին՝ 1) Ֆինանսական, 2) Խնայդրամարկղի և 3) Բանկային·

· Դասակարգային պայքարի պատմությունը, Համկոմկուսը (բոլշևիկների) և Կոմինտերնի պատմությունը
2· Դիալեկտիկական մատերիալիզմ
3· Քաղաքատնտեսություն
4· Խորհրդային տնտեսության տեսությունը
5· Տնտեսական աշխարհագրություն
6· Մայրենի լեզուն և գրականությունը
7· Ռուսաց լեզու
8· Ուսմունք Խորհրդային պետության մասին:

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵԽՆԻԿԱՆ ՑԻԿԼ—ԲՈԼՈՐ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

9· Մաթեմատիկա
10· Ֆիզիկա
11· Բիոլոգիա
12· Քիմիա

### ՀԱՏՈՒԿ ՑԻԿԼ—ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՀԱՄԱՐ

13· Տնտեսական իրավունք
14· Ընդհանուր հաշվետարություն
15· Բյուջետային հաշվետարություն



16· Ֆինանսական հաշվառումներ
17· Ընդհանուր վիճակագրություն
18· Հատուկ վիճակագրություն
19· Տեղական ֆինանսներ և տեղական բյուջե
20· Շրջանի ֆինպլանը
21· ԽՍՀՄ-ի և կապիտալիստական երկրների ֆինանսները
22· Պետական տնտեսությունները
23· Արդֆինպլանի կազմումը և վերլուծումը
24· Պետվարկը և խնայդրամարկղը
25· Պետապահովություն
26· Միասնական ֆինպլան և պետբյուջե

### ՀԱՏՈՒԿ ՑԻԿԼ—ԽՆԱՅԴՐԱՄԱՐԿՂԻ ԲԱԺՆԻ ՀԱՄԱՐ

27· Տնտեսական իրավունք
28· Ընդհանուր հաշվետարություն
29· Ֆինանսական հաշվառումներ
30· Խնայդրամարկղների հաշիվ և գործառնական տեխնիկա
31· ԽՍՀՄ-ի և կապիտալիստական երկրների ֆինանսները
32· ԽՍՀՄ-ի և կապիտալիստական երկրների դրամ և վարկ
33· Ընդհանուր վիճակագրություն
34· Հատուկ վիճակագրություն
35· ԽՍՀՄ-ի պետական վարկ
36· Խնայդրամարկղի պլանի կազմակերպում
37· Մասսայական աշխատանքների կազմակերպում
38· Ծանուցում և կոնտրոլ

### ՀԱՏՈՒԿ ՑԻԿԼ—ԲԱՆԿԱՅԻՆ ԲԱԺՆԻ ՀԱՄԱՐ

39· Տնտեսական իրավունք
40· Ընդհանուր վիճակագրություն
41· Բանկային գործառնության տեխնիկան և հաշվառումը
42· Ֆինանսական հաշվառումներ
43· ԽՍՀՄ-ի և կապիտալիստական երկրների դրամ և վարկ

44. Ընդհանուր վիճակագրություն
45. Հատուկ վիճակագրություն
46. ՍՍՀՄ-ի և կապիտալիստական յերկրների ֆինանսները
47. Վարկի պլանավորումը և կազմակերպումը
48. Տնտեսական մարմինների պլանի կազմակերպումը։

---

62

ՀՀ Ազգային գրադարան

NL0226423

53 648